

Դպրոցականների առարկայական օլիմպիադա

Մարզային փուլ

Հայ գրականություն-2018

/տևողությունը – 150 րոպե/

12-րդ դասարան

1. Դանիել Վարուժան. <<Ձոն>>: Ո՞ր ժողովածուի համար է բնաբան ծառայում այս քերթվածը: Քանի՞ տնից է բաղկացած բանաստեղծությունը և ինչո՞վ են տարբերվում այդ տների առաջին տողերը: Գրի՞ր ինչպես են զուգորդվում <<Ձոնի>> առաջին ու վերջին բառերը: Գրի՞ր Վարուժանին բնութագրող շրջասուկթը: 4մ.

2. Պարույր Սևակի <<Եռաձայն պատարագ>> պոեմը : Որտեղի՞ց է վերցրել կրկնվող տողերը. բացատրի՞ր դրանց իմաստը: Ի՞նչ աղերսներ ունի այս պոեմը <<Անլռելի զանգակատուն>> պոեմի հետ: Ո՞ր հանճարներին է միմյանց համադրում Սևակը <<Անլռելի զանգակատուն>> և <<Եռաձայն պատարագ>> պոեմներում. ինչո՞ւ: 4մ.

3. Ո՞վ է Ծմակուտի քուրմը: Ո՞ր բնաշխարհի հետ է համեմատվում Ծմակուտը: Նկարագրի՞ր այդ գրողի՝ քո սիրած հերոսին՝ օգտվելով հեղինակային բնութագրումներից և համաձայնվի՞ր կամ հակադրվի՞ր :

4մ.

4. Ո՞ր ստեղծագործություններում է արտահայտվում Նաիրի Չարյանի ապաշխարանքը: Ինչո՞ւ և ո՞ւմ դեմ էր մեղանչել բանաստեղծը: Կարծիքդ հիմնավորի՞ր բանաստեղծի տողերով: 4մ.

5. Վահագն Դավթյանի պոեզիան: Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել բանաստեղծը: Ի՞նչ թեմաներով է ստեղծագործել. թվարկի՞ր մի քանի ստեղծագործություն:

Վերլուծի՞ր - Երբ վերջին անգամ աչքերս փակվեն այս աշխարհի դեմ,
Երբ հայացքիս դեմ թրթռա վերջին ճառագայթը ջինջ,
Կոպերիս տակով մի վերջին անգամ կվազի, գիտեմ,
Մի ոտաբոբիկ, բարակ մի աղջիկ:

Երբ վերջին անգամ աչքերս փակվեն այս աշխարհի դեմ,
Ու երբ ճակատիս թրթռա շունչը ուրիշ մի հովի,
Իմ կոպերի տակ մի վերջին անգամ կփռվի, գիտեմ,
Մի արևավոր, հեռավոր հովիտ:

4մ.